

ենք Կիւրակոս եւ Յովհաննէս զրիչներն են, որոնցից վերջինը արդէն ծեր էր, ինչպէս տեսանք: Այս եւ երկու արուեստագէտների գործերի որոշ նմանութիւնները հիմք են ծառայում մեզ ենթադրելու, թէ անանուն սուցիչները Կիւրակոս եւ Յովհաննէս մանրանկարիչներն են: Հաւանօրէն սրանց համեմատութեամբ է, որ իրեն «փցուն եւ ախմար» է անուանում:

Ձեռագրի նկարագրութեամբ եւ պատմութեամբ աւելի հետաքրքրուողներին մատնանշել կարող ենք Արտաւազդ Արքեպիսկոպոսի գործը:

Թորոս Ռոսլինի գրչութեամբ երկրորդ եւ Կոստանդին Կաթուղիկոսի ստացուած ութերորդ ձեռագիրն է Երուս. No. 251 աւետարանը, ընտիր մագաղաթ 19x7 սմ., բոլորգիր, գրուած 1260 թուին Հոռմկլայում, եւ զարդարուած շատ ճոխ կերպով խորաններով, աւետարանիչների պատկերներով եւ սկզբնազարդերով, նաեւ տէրունական պատկերներով: Ընծայականը տպել ենք մեր Գրչութեան Արուեստ. Գ. Քարտէս Հայ Հնագրութեան մէջ, որ համեմատելի է Բարձրբերդի 1248 թուի, Ձէյթունի եւ այլ աւետարանների ընծայականների հետ: Ձէյթունի՝ 1256 թուականի եւ Երուս. No. 251-ի ընծայականների հետեւեալ բառերը նոյնանում են կատարելապէս.

Որ զայս մատեան աւետարան,
Մեզ հնչեցեր ձայն ցնծութե
Ահա զքոյս առեալ քեզ տամ
Բարձեալ ի ձեռս առաջի զամ.
Առ զայս նուէրս բարեխնամ
Եւ յիս հայեաց որ հաշտակամ:*

Նոյնանում են նաեւ Բարձրբերդի 1256 թուականի եւ Երուս. No. 251-ի ընծայականների հետեւեալ տողերը.

Ով յանսկիղքն ծոցոյդ բան
Որ ծաղկեցար յազգս մարդկան
Եւ զչնորհս քո շքրթան,
Հեղեր աւրհնեալդ յաւիտեան:

Դու զպճնողս քո բանի, եւ
Ըզարգարող (s!) այամն տառի:
Ձոր Կոստանդին հովիւ բարի,

*Ձէյթունի աւետարանի մէջ վերջին տողը «հաշտակամ»:

Յաթու նստու ընդ Պետրոսի:*

Տալիս ենք No. 251-ից 7ր. խորանը (Պատկ. 4) համեմատութեան համար պ. Աղամեանի հատակոտորների հետ, որ յետոյ պիտի տեսնենք: Գլխաւոր յիշատակարանը, ինչպէս եւ Թորոսի ձեռքով գրուած միւս աւետարանների մէջ տեղեկութիւններ է տալիս Կոստանդին Կաթուղիկոսի, Հեթում Թազաւորի, բայց նաեւ ժամանակակից դէպքերի՝ Հալէպի առման մասին Թաթարների կողմից: Ձեռագիրը յետոյ անցել է Կոստանդին Վահագու ձեռքը եպիսկոպոս եղած ժամանակ, որ երկար եւ պատմական բովանդակութեամբ յիշատակարաններ ունի: Հայոց ՁԱ (=1452) թուին աւետարանը արդէն Հերմոնավանից նշանաւոր Սարգիս Վարդապետի սեպհականութիւնն է եւ նուիրում է Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքին: Կայ նաեւ ընդարձակ յիշատակարան Գրիգոր շղթայակրի գործունէութեան մասին:**

* * *

Թորոս Ռոսլինի ամենաճոխ նկարագրութեամբ երրորդ գործն է Սեբաստիայի նշանաւոր աւետարանը, գրուած 1262 թուին Հոռմկլայում, Կոստանդին Կաթուղիկոսի հովանաւորութեամբ իններորդը, նորա եղբորորդու Թորոս քահանայի ստացմամբ: Գրիչն է նոյն ինքը նկարիչը, երկաթագիր եւ ընտիր մագաղաթի վերայ: Այս աւետարանը մենք տեսել, լուսանկարել եւ նկարագրել ենք 1914 թուին Սեբաստիայի Ս. Նշանի վանքում. ապա նախընթաց պատերազմից յետոյ բերուած է Փարիզ, որ գնել է արուեստի բարեկամ եւ հնութեանց հաւաքող պ. Տիգրան Քէլէկեան եւ ապա վաճառել Բալ-

*Ընդգծուածները կցումներով Երուս.ի No. 251-ի մէջ: Բազմակետերով նշանակուածը ութ տող, չկայ No. 251-ի մէջ: Բարձրբերդի աւետարանը առաջին տողում «Մոցդ», գուցէ տպագրութեան սխալ է այս տարբերութիւնը: Երրորդ տողում «Եւ մեզ զնորիս քո շքրթան»: Վեցերորդ եւ եօթերորդ տողերում «Եւ զարդարող այսմ տառի, Ձոր Ստեփանոս հովիւ բարի», վերջին տարբերութիւնները անունների մէջ է, տարբեր ստացողների պատճառով: Բարձրբերդի աւետարանը չունի No. 251-ի ընծայականի երկրորդ երեսի բառերը, որ վերեւ տեսանք:

**Ձ-ի մանրամասն նկարագրութիւնը յիշատակարաններով չկարողացնի տպագրել այստեղ տեղի սղութեան պատճառով: